Երեկոյեան դէմ վրացիները նորից փորձեցին գրաւել Սաղախլուն, փոքրիկ խմբերով առաջ անցան, մաղլցեցին 2660 բարձունքը: Մեր զրահապատը կրկին գործողութեան դիմեց նրանց դէմ: 2րդ գնդի մէկ գումարտակը գլխ. Զերդեչտովի հրամանատարութեամբ բռնեց 2702 բարձունքը: Կռիւներ տեղի ունեցան և Կորոլկովի ու Տէր-Նիկողոսեանի ճակատներում: Վերջինում, երկու օրւայ կատաղի գրոհներից յետոյ, վրացիները գրաւեցին Բոլնիս-Խաչէն գիւղը:

Նոյն օրը, երկար ու յամառ պահանջներից յետոյ, Դրօն, վերջապէս, ստացաւ փոքրիկ օժանդակութիւն. 4րդ և 6րդ գնդերի համար հասան մօտ 600 թարմ զինուորներ: Դրօն մի կողմից յետ էր մղում թշնամու յարձակումները, միւս կողմից պատրաստւում դեկտ. 31-ի վճռական կռւի համար. երկու կողմերն էլ աշխատում էին զինադադարի վայրկեանին իրենց համար նպաստաւոր դիրքեր ապահովել:

Դեկտ. 31-ի առաւօտեան հայկական զօրամասերը դասաւորւած էին հետևեալ ձևով. աջ թևում կանգնած էր գնդ. Տիմչենկօն 6րդ գնդի 2 գումարտակով (մօտ 1100 սւին) և 6րդ լեռնային մարտկոցի 2 թնդանօթով: Նրա ճակատն էր Գիւնաշթափա լեռ—Քերփիլին մինչև երկաթուղի: Կենտրոնում՝ 2րդ գնդի 3 գումարտակներ (մօտ 600 սւին) գլխ. Յովհաննիսեանի հրամանատարութեամբ և 7րդ լեռնային մարտկոցի երկու թնդանօթ՝ երկաթուղուց մինչև Բարդաձորից Ճոճկան տանող ճանապարհը: Զախ թևի վրա՝ փոխ-գնդ. Կորոլկովը՝ Բարդաձորի ճանապարհից մինչև Օփրեթի ճանապարհը: Նրա մասերը դասաւորւած էին. Գիւլ-Գաղիում միլիցիոն գունդը, Բարդաձորում 4րդ գնդի մէկ գումարտակը, 2 գումարտակ Խոժոռնիում, 50 ձիաւոր Աղքեռրփիում: Պահեստը գտնւում էր Ճոճկանում՝ 2րդ գնդի 2 գումարտակներ և 7րդ մարտկոցի 2 թնդանօթներ:

Վրացիները դեկտ. 31-ի առաւօտեան Սաղախլուում հաւաքել էին մօտ 3 և կէս հազար կռւող*), Դամիա—Սաղախլուում 12 թնդանօթ և մօտ 800 հոգի էլ Քասումլու թրքական շրջանում: Նրանց առաջապահ մասերը, մօտ 2 վաշտ, գրաւում էին 2660 բարձունքը:

Հայկական հրամանատարութեան ծրագիրն էր՝ գրաւել Սաղախլուն և ոչնչացնել զօր. Մազնիևի զօրամասը: Այդ նպատակով տրւել էր հետևեալ հրամանը.

Աջ թևը, ժամը 2-ին, սկսում է յարձակման, գրաւում 2660 բարձունքը և, եթէ ձախ թևը առաջանայ յաջողութեամբ, Մամայում կապւում նրա հետ: Կենտրոնական զօրամասը՝ զարնում է ճակատից և զբաղեցնում Սաղախլուի թշնամուն: Ձախ թևը շարժւում է կենտրոնի հետ միաժամանակ և գրաւելով Սիոն—Դամիա շրջանը՝ Մամայում միանում է աջ թևին: Այսպիսով թշնամին առնւելու էր օղակի մէջ և ջախջախւելու:

---

*) Զօր. Մազնիևի յետագայ յայտարարութիւնների համաձայն, վրացիները ամբողջ հայկական ճակատի վրա ունէին 8,000 կռւող: